

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/10 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
12	Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	<p>Կոշիկը արտադրվում է սև գույնի բնական կաշվից, մշակված անջրանցիկ ծածկույթով: Կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, միջատակից և ներբանից: Երեսամասի և հետնամասի արտաքին գոտու կաշվի հաստությունը՝ 1.8-2.0 մմ, իսկ ճտքերի կաշվի հաստությունը՝ 1.6-1.8 մմ: Ներսի ծածկույթը շնչող, ծակոտկեն գործվածքից և բիազից: Կոշկաքիթը և կրնկամասը կոշտ տերմոպլաստիկ նյութից: Ճտքերի բարձրությունը 110մմ±2%, վերևի մասը փափուկ կանթ: Ճտքերի վրա պետք է լինի 5 զույգ մետաղյա օղագույցներ, կապումը կոշկաքուղտերով: Երեսամասը, ճտքերը, ետնամասի արտաքին գոտին իրար հետ ամուր կարակցված են: Արտաքին ներբանը պատրաստված է մաշակայուն, ջերմակայուն, ցրտադիմացկուն պոլիուռետանից, որի երկայնական կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6մմ: Նրբանը միջնատակի հետ կարակցվում է սոսնձման եղանակով բարձր ճնշման տակ: Ներբանը տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք է նշված լինի չափսը, ներսամասում նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը ու տարեթիվը: Արտաքին տեսքը համաձայնեցվում է Գնորդի հետ: Փաթեթավորումը սովաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 10-15 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող</p>

		<p>կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Կոշիկի չափերի քանակները տրամադրվում է Գնորդի կողմից: Արտադրվում է 38-47 չափերի: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված կամ անհրաժեշտության դեպքում Էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ:</p>
--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԼ ԲԿԵ-ԷԱՃԱՊՁԲ-23/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
12		